

ՀՐԱՄԱՆԱԿՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՅՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

Մեծերի թողած նամակագրությունն անչափ արժեքավոր նյութ է, յուրահատուկ մի բանալի, որի միջոցով կարելի է ներթափանցել հեղինակի ներաշխարհը, հասկանալ նրան, նրա ժամանակաշրջանը, ճանաչել նրան շրջապատող մարդկանց:

Ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը մշտապես շրջապատված է եղել վար անհատականություններով, որոնցից է Մարտիրոս Սարյանը:

Նրանք առաջին անգամ հանդիպել են 1911 թ. ծնունդը Մոսկվայում «Մир աշխատավորության և ազդեցիկ գեղարվեստական միավորնան ցուցահանդեսներից մեկի ժամանակ», որը երկուսն էլ ներկայացրել էին իրենց գործերը¹: «Եվ այդ ժամանակից,- ինչպես գրում է Սարյանն իր հուշերում, - սկսվեց մեր բարեկամությունը»²: Ֆիշտ կլիմի ասել, որ նրանց միջև հաստատվեց փոխադարձ հարգանքի ջերմ հարաբերություն, իսկ մտերմությունը և բարեկամությունը ծնվում է տարիներ անց հայրենի երկրում մշտական բնակության ընթացքում:

1923 թ., երր Ա. Թամանյանը եկավ Յայաստան, նրանց հարաբերություններում սկսվեց նոր փուլ: Փոխադարձ համակրանքը ոչ միայն վերածվեց մեր մշակույթի երկու մեծագույն գործիքների խևական ամուր բարեկամության, այլև նրանք դարձան համախոհներ՝ անմնացորդ նվիրվելով գլխավոր գաղափարին՝ հայոց պետականության կայացմանը և նոր մայրաքաղաքի կառուցմանը:

1911 թ. հիշարժան հանդիպումից հետո հետագա շփման ցանկություն, անշուշտ, պետք է որ առաջանար, քանզի նրանց կենսագրության մեջ ընդհանուր շատ բան կար. գրեթե տարեկիցներ, համերկրացիներ՝ նոր նախաջանացիներ³, քաղմազավակ և նյութապես ոչ շատ ապահով ընտանիքների զավակներ, ինքնուրույն ու աշխատաներ, նպատակայաց և կամային:

Գնալով Ռուսաստանի խոշորագույն մշակութային կենտրոններ՝ Թամանյանը՝ Ս. Պետերբուրգ, Սարյանը՝ Մոսկվա, ճրանք անմիջապես հայտնվեցին տաղանդավոր և հեղինակավոր մարդկանց միջավայրում, որոնք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ռուսական արվեստի սեռուգրն էին: ճարտարագույն արվեստի սեռուգրն էին:

¹ Θαυμάνιανή μασινιάκηποτρεπούντες «Μир искусства» φέηραψευστικών μήιαψηρών μασινιάκης στην ομάδα της Καραβίλας ότι από την παραγωγή της έχει πάρει μεγάλη σημασία. Τον Ιούνιο του 1922, η ομάδα της Καραβίλας παρέστη στην Αθήνα για να παρουσιάσει την παραγωγή της στην Ελλάδα. Η παραγωγή της Καραβίλας ήταν η πρώτη παραγωγή της ομάδας της Καραβίλας στην Ελλάδα.

² Сарьян М. С. Из моей жизни. М., 1970, с. 316.

րապետներ, նկարիչներ, քանդակագործներ, գրողներ, բանաստեղծներ, թատրոնագետներ. «Արծաթե դարի» ռուս մշակույթի գործիչների կողքին նրանք ձևավորվեցին և հասունացան որպես արվեստագետներ:

Շուտով երկուսն էլ արժանացան ճանաշման և համընդիանուր գնահատամքի: Սուկվայում և Ս. Պետերբուրգում նրանց մասին խոսեցին որպես շատ լուրջ և տաղանդավոր արվեստագետների, և երեսունը հազիվ բոլորած նրանք արդեն ճանաչված վարպետներ էին: Սարյանի գործերը գնում էին մասնավոր հավաքորդները և թանգարանները, թամանյանը աշխատում էր մեծահարուստների, ազնվականների, բարձրաստիճան պալատականների և կայսերական ընտանիքի անդամների պատվերներով⁴, իսկ Ս. Պետերբուրգում արդեն ուներ իր արվեստանոցը, ուր աշխատում էին բարձրագույն կրթությամբ 11 մասնագետներ:

Ոուսաստանյան ժամանակաշրջանի թամանյան-Սարյան նամակագրությանը վերաբերող ուղղակի փաստեր չկան, նրանց ամբողջ նամականին այսօր ներկայացված է ընդամենը 10 նամակներով, որոնցից Սարյանի գրչին պատկանող 7 նամակներն արդեն հրատարակված են⁵, իսկ թամանյանի երեք նամակները մնում են անտիպ: Դրանք սիրով մեզ է տրամադրել Ս. Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Ռուզան Սարյանը, որին, օգտվելով պատեհ առիթից, հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Թամանյանի նամակները Սարյանին թվագրված են 1922, 1926 և 1927 թթ: Առաջինը, ըստ ժամանագրության, 1922 թ. փետրվարի 5-ին Սարյանին հասցեագրված նամակն է Թավթիզից, ուր թամանյանը արտագաղթել էր 1921 թ. ապրիլին՝ Յայաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների պատճառով⁶:

1921 թ. մայիսի սկզբից թամանյանը մոտ երկու տարի ապրել է տարագրության մեջ (1921 թ. մայիս – 1923 թ. մարտ), և այդ ամբողջ ժամանակահատվածում Խորհրդային Յայաստանի իշխանությունները բանակցություններ էին վարում հրավիրելով նրան հայրենիք:

Քաջ գիտակցելով, որ թամանյանի նման մասնագետի ներկայությունը Յայաստանում ոչ միայն ցանկալի էր, այլև անհրաժեշտ, այդ բանակցություններին ակտիվորեն միանում է նաև Սարյանը՝ մեկ անգամ ևս հիշեցնելով թամանյանին հայրենիքի նկատմամբ հայազգի բոլոր նտավորականների պարտքի մասին: Ցավոք, թամանյանին ուղղված Սարյանի այդ նամակը չի պահպանվել, և դրա բովանդակությունը ենթադրում ենք թամանյանի պատասխան նամակից: Թամանյանը հեռու էր քաղաքականությունից: Նրան հետաքրքրում էր միայն մեկ քամ աշխատել հանուն ազգի, հանուն պետականության կայացման, ուստի Սարյանի մտքերն ու զգացումները մտավորականության պարտքի նամակին հայ-

⁴ Թամանյանի պատվիրատուների թվում էին արքունիքի արարողապետ կոմս Վ. Կոնտեյը, Յարոսլավի նահանգապետ կոմս Դ. Տատիշչևը, իշխաններ Շերբատովը, Կուրովակինը, Գոլիցինը, կոմսուիի Շուվալովան, Մեծն իշխանուիիներ Ելիզավետա Ֆյոդորովնան (կայսրուհու քույրը) և Օլգա Ալեքսանդրովնան (Սիկուլա II կայսեր կրտսեր քույրը):

⁵ Տե՛ս ս Մարտիրոս Սարյան, Նամակներ, հատոր առաջին, 1908-1928, Եր., 2002, էջեր՝ 249, 323, 325, 337, 372, 434:

⁶ Առաջին Յանրապետության օրոք թամանյանը աշխատեց համարյա մեկ տարի: Այդ կարծ ժամանակահատվածում Յ. Կոջոյանի հետ համատեղ մշակեց անկախ Յայաստանի պետական խորհրդանիշը՝ զինանշանը, իիմնադրեց և դեկավարեց Յնության պահպանության կոմիտեն, սկսեց աշխատել Երևանի գլխավոր հատակագծի վրա:

րենիքի նկատմամբ համահունչ էին և հոգեհարազատ Թամանյանի դիրքորոշմանը: Թամանյանը պատրաստ էր ծառայել Յայաստանի վերածննդին. նա արդեն հասցրել էր ուսումնասիրել Յայաստանի շինարարության կազմակերպման հարցը, քաջատեղյակ էր երկրի կարիքներին և հետաքրքիր մտահղացումներ ուներ ճարտարապետության ու շինարարության վերաբերյալ: Նա հածույքով իր ուսերին կվերցներ այդ անչափ մեծ և դժվարին գործը, եթե համոզված լիներ, որ կհաջողվի արդյունավետ և համգիստ աշխատել գոնե մի քանի տարի:

Բայց այժմ հանգամանքների բերումով դա հանարավոր չէր: «Յայաստան գալ այժմ ես չեմ կարող, ես սարսափելի վշտացած եմ, մահացավ առջիկս՝ 13 1/2 տարեկան...», - գրում է նա Թավրիզից: Թամանյանի այս նամակը ցնցող է. անչափ զգացմունքային, գրված մեկ շնչով, այն ստիպում է ապրումակցել և կարեկցել հեղինակին: Այս նամակում իրարամերժ զգացումների և ապրումների մի ամբողջ կծիկ է. այստեղ և՝ անձնական ողբերգությունն է, և՝ ազգային գաղափարին ու դրան ծառայել տենչող արվեստագետն քաղաքացու ողբերգությունը, որը նվիրված է ազգային գաղափարին և ուզում է դրան ծառայել, բայց ստիպված է հաշվի նստել իրողության հետ, և՝ վերջապես, պարտավորվածությունը ընտանիքի նկատմամբ:

1923 թ. մարտի 3-ին ԽՍՀՄ ժողովական նախագահ Ս. Լուկաշինի⁷ հրավերով Թամանյանը գալիս է Երևան բանակցությունների, համոզվելու, թե որքան է նպատակահամար իր վերադարձը հայրենիք:

Նա տեսնում և համոզվում է, որ չնայած տնտեսական անչափ ծանր իրավիճակին՝ Յայաստանը որպես պետություն կայացել է, ուստի մնաց Յայաստանում, որտեղ առջևում էին ստեղծագործական որոնումները և նոր գաղափարները, հուսահատության և ոգեշնչվածության պահերը, ծանր, լարված աշխատանքային տարիները: Եվ այդ հոգնատանց տարիների ընթացքում մշտապես նրա կողմից էր Սարյանը, ով դարձավ Թամանյանի թևութիկունքը, նրա ծեռնարկումների ամենաեռանդուն աջակիցը: Թամանյանը միշտ զգացել է նրա ներկայությունը, նույնիսկ երբ նա հազարավոր կիլոմետրեր հեռու էր՝ վենետիկում, Սուկվայում կամ Փարիզում:

Գրեթե ամեն նախակում Սարյանը բարկանում է, նեղանում և նախատում, բայց և ներում է ընկերոջը. «Սիրելի Ալեքսանդր, չգիտեմ ինչքան նամակ եմ գրել քեզ, բայց քեզանից մեկ նամակ եմ ստացել, իհարկե, աչքի առաջ ունենալով քո հիվանդությունը⁸, չեմ պահանջում, որ գրես, բայց եթե ուզենայիր

⁷ Լուկաշին (Սրափինյան) Սարգիս Լուկաշի (1883-1937) – կուսակցական և պետական գործչ, ՌՍԴԲԿ-ի անդամ 1906 թ., խորհրդային տարիներին զբաղեցրել է մի շաբթ պատասխանատու պաշտոններ Յայաստանում, Անդրքեներացացիայի ժողովնիշորհում, ԽՍՀՄ ժողովականություն: 1937 թ. բռնադատվել է: Թամանյանին ծանրթ է եղել դեռ Ս. Պետերբուրգից: 1910 թ. ավարտելով Ս. Պետերբուրգի համալսարանի հրավարանական ֆակուլտետը՝ աշխատանքի է անցել է Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցիների գույքի կառավարման խորհրդում որպես հրավարան և գանձապահ: Այդ նույն խորհրդում 1904-1915 թթ. Թամանյանը զբաղեցրել է գլխավոր ճարտարապետի պաշտոնը: Կարելի է ենթադրել, որ Լուկաշինի հրավերը իր դերն է խաղացել Թամանյանի վերադարձի հարցում:

⁸ Թամանյանը տառապում էր կատարակտով (սոսպակի մթագնում), որը հավանաբար ուժեղ հոգեկան ցնցման հետևանքն էր՝ դստեր մահվան պատճառով: Յիշանդարությունը խորացավ, և նրա մի աչքը կուրացավ: 1925 թ. սկսած՝ Թամանյանը ինքնուրույն զծագրել չէր անում: Անհրաժեշտ էին օգնականներ: Նա շատ ծանր էր տանում այդ տկարությունը, որը կաշկանդում էր և ստիպում հաճախ հրաժարվել այս կամ այն գաղափարից, մտահղացումից, քանզի չէր կարող դրանք հրագործել անձամբ:

ինձ հետ քո մտքերով և մտածումներով կիսվել, իհարկե, միջոց կգտնեիր, բայց էլի քեզ ներում եմ, որովհետև սիրում եմ քեզ ինչպես մարդ և միևնույն ժամանակ ստեղծագործող...» (10 հունվարի 1927 թ., Փարիզ):

Այսպես Թամանյան-Սարյան նամակագրությունը ընդունում է միակողմանի բնույթ: Գրում էր իհմնականում Սարյանը: Նա ազատ արվեստագետ էր, և ոչինչ չէր խանգարում նրա աշխատանքին, ինչպես նաև նամակ գրելու ցանկությանը: Սարյանը սիրով ու հաճույքով էր նամակ գրում կիսելով ընկերոջ հետ իր մտքերը, մտահղացումներն ու տպավորությունները:

Թամանյանին հասցեագրված նամակներում խոսքը մշտապես ճարտարապետության ու քաղաքաշինության, մայրաքաղաք Երևանի շինարարության մասին է: Եվ դա հասկանալի է. վերջապես իրականանում է հայության բազմաթիվ սերունդների ամենանվիրական երազանքը՝ վերականգնվում է պետականությունը, կառուցվում է նոր մայրաքաղաքը: Ինչպիսի՞ն է լինելու այն: Այս հարցը առավել ևս անհանգստացնում է Սարյանին: Եվ դա արտահայտվում է յուրաքանչյուր նամակում. «Ինչպես ես ներկայացնում Երևանի ամբողջ վերաշինության գործը: Քո ընդհանուր վերաբերնությունը ոժին, ի՞նչ ո՞ք: Արդյոք ավելի հետաքրքրական, ինքնուրույն, պայծառ, գեղեցիկ անսամբլ ճարտարապետական տեսակենտից» (10 հունվարի 1927 թ., Փարիզ):

Սարյանը խորապես հավատում և վստահում է Թամանյանին. նրա հեղինակությունը մեծ է և անհերքելի: Սարյանը գիտի և համոզված է, որ ապագա մայրաքաղաքի ճարտարապետությունը հուսալի ծեռքերում է: Այնուամենայնիվ, դա նրա մշտական մտածումների, խոհերի և կասկածների առարկան է, որոնք նա կիսում է Թամանյանի հետ և խորհուրդներ տալիս:

Երևանի վերակառուցումը և նրա հեղինակը Սարյանի անհանգստության և հետաքրքրության գլխավոր առարկան են նաև այլ անձանց ուղղված նամակներում. «Ի՞նչ է անում Թամանյանը: Ինչո՞վ վերջացավ թատրոնի շենքի կոնկուրսը» (Ռ. Դրամբյանին, 25 դեկտեմբերի 1926 թ.), կամ «Ա. Թամանյանի Երևանի նոր կազմած նախագծով գարնանից սկսելու են կառուցել նոր շենքեր, իհարկե, բոլոր հարմարություններով» - գրում է նա Խահակյանին՝ ցավով, բայց և հպարտությամբ ավելացնելով. «... այդ շենքերը կլիմեն ավելի գեղեցիկ և հարմար, քան թե այն բոլոր շենքերը, որ հայ բուրժուազիան շինել է Թիֆլիսում, Բաքվում, և մի շատք քաղաքներում Հայաստանից դուրս» (Ա. Խահակյանին, 2 փետրվար 1925 թ., Երևան):

Թամանյան-Սարյան նամակագրության մեջ գերիշխում է մայրաքաղաքի և նրա գլխավոր կառույցի՝ ժողոտան թեման: Այս կարևորագույն կառույցին է ուղղված Թամանյանի ստեղծագործ ամբողջ ներուժը: Դեռ 1920 թ. Թամանյանը գրել է. «Խոսակցություններ են պստվում թատրոնի շինարարության մասին» (Ե. Լանսերենին, 20 հունիսի 1920 թ.): Այս մի նախադասությունը ենթադրել է տալիս, որ դեռ Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք մտադրվում էին կառուցել թատրոն: Չէ՞ որ յուրաքանչյուր լուրջ մայրաքաղաք պետք է ունենա թատրոն՝ որպես մշակութային կյանքի քաղկացուցիչ: Հնարավոր է այդ խոսակցությունների սկզբնադրյուրը հենց Թամանյանն է: Վաղուց ի վեր նա փայփայել է թատրոն կառուցելու գաղափարը: Դրա նասին վկայում է 1911 թ. դեկտեմբերի 31 նորատեսորում արված մի նշում. «Կուգենայի կառուցել թատրոն: Դասական: ճակատը խիստ տաճարի նման...», և կողքին էսքիզը, որը շատ է հիշեցնում ժողոտան միադահլիճ նախագծի վաղ տարբերակները:

ժողոտան կառուցումը, ավելի ծիշտ, ապագա նախագծին վերաբերող գեղարվեստական հարցերը մեծ հետաքրքրություն առաջացրին հատկապես արվեստագետ մտավորականների շրջանում: Սամուլում սկսվեցին հարցի բուռն քննարկումները: «Խորհրդային Հայաստան» թերթում (№ 57, 1926 թ.) տպագրվեց նաև Սարյանի հոդվածը «Երևանում կառուցվելիք ժողովրդական տան խնդիրը» վերնագրով: Սարյանը համոզված էր. «Մեր նոր շինարարները գլխավորակես պետք է դիմեն հայկական ժողովրդական ոճի հենց այդ կենդանի աղբյուրին: Նման օրինակ մենք արդեն ունենք՝ դա Երևանի հիդրոկայանի շենքն է»: Պաշտպանելով Հայաստանում Թամանյանի այս անդրանիկ կառույցը⁹ նա գրում է. «Եթե հաջողվել է ջրակենտրոնակայանին այնպիսի բացառիկ տեսք տալ, որ համապատասխանի այժմնականությանը և այն ամուր կերպով շաղկապել հայկական կլասիկ ծևերի հետ, ապա պարզ է, որ արվեստի սունը՝ բատրոնը, էլ ավելի ուժեղ կերպով պիտի կրի այս օրիգինալ ոճի ծևերը և այդ աշխատանքը պիտի հանձնարարել լավ կառուցողի հոչակ վայելող փորձառու մարդու»: Կարելի է չկասկածել, որ, «փորձառու մարդ» ասելով, Սարյանը նկատի ուներ Թամանյանին:

Գտնվելով հայրենիքից հեռու՝ Սարյանը հոգով և սրտով Երևանում էր, ապրում էր նրա հոգսերով, ապագա թատրոնի խնդիրներով ջանալով որևէ բանով օգտակար լինել Թամանյանին այդ գործում: «Այստեղ Սոսկվայում կա Երմակով-ի որդին, որի մոտ կամ բոլոր այն լուսանակարները, որ լուսանկարել է ֆոտոգրաֆ Երմակով-ը: ... Կարելի է հետո բանակցության մեջ մտնել նամակով: Նա ինձ ասաց, որ ուրախությամբ ինչ որ պետք է, կարող է կրկնել: Ես կարծում եմ, որու պետք է հետաքրքրվես, հետո նամակագրություն սկսես, իսկ ես էլ այստեղ կիսուեմ» (12 հունիսի 1926 թ., Սոսկվա): Խոսքը այստեղ ռուս անվանի լուսանկարիչ, ազգագրական և հնագիտական բազմաթիվ արշավախմբերի մասնակից Դմիտրի Երմակովի մասին է, որը լուսանկարչական հարուստ նյութ էր հավաքել նաև հայկական ճարտարապետության վերաբերյալ: Սարյանը ծանոթանում է լուսանկարչի որդու՝ Ի. Դ. Երմակովի հետ և պայմանավորվում է ձեռք բերել այդ նյութերը: Թամանյանը անմիջապես արձագանքում է Սարյանի այս նամակին, նշելով, որ «Երմակովը մեզ համար շատ կարևոր է»: Թամանյանը խորապես երախտապարտ էր ընկերոջը՝ քանզի այդ լուսանկարչական հավաքածուն իսկական գտածոն էր ճարտարապետի համար:

Ավելի ուշ, Սարյանի ջամփերի շնորհիվ Փարիզում լույս տեսնող «Երևան» թերթի 1927 թ. համարներից մեկում¹⁰ տպագրվել է ժողոտան թամանյանական նախագիծը՝ հեղինակի մանրամասն բացատրագրով: «Գիտեմ և ուրախ եմ, որ դու շատ հետաքրքրվում ես ժողովրդական Տան նախագծով և կուգենայի շատ բան ասել քեզ այդ մասին, բայց առայժմ անկարող եմ, որովհետև շտապում են գնալ էլի գործերով: Որ գաս Երևան շատ կիսունք այդ մասին... Յամբուրում են քեզ, որովհետև շատ եմ կարոտել: Քեզ սիրող Ա. Թամանյան»:

Թամանյանի և Սարյանի մտերմությունը նյութականացվել է և հավերժացվել ոչ միայն նամակների շնորհիվ:

1924 թ. Հայաստանի ժողովների որոշում ընդունեց Սարյանի համար Երկիրկանի տուն և արվեստանոց կառուցելու մասին: Ո՞վ պետք է կազմեր

⁹ Երևանի հիդրովենտրոնակայանը կառուցվել է 1925 թ. Այս կառույցի, ինչպես նաև էլեկտրաֆիկացման գործին մեծ ծառայություններ նախագծելու համար 1926 թ. Թամանյանին շնորհվում է Հայաստանի ժողովրդական ճարտարապետի կոչում:

¹⁰ Տե՛ս ո «Երևան», № 311, 6 նոյեմբեր, 1927 թ.:

ապագա տան նախագիծը, եթե ոչ Թամանյանը: Բայց նա շատ գրաղված էր, ուստի և միայն 1929 թ. կարողացավ ավարտել նախագիծը: Վարպետի համար հարմարավետ արվեստանոց ստեղծելու միտքն այնքան առանձքային էր Թամանյանի համար, որ այն վերնագրվեց. «Նկարիչ Մ. Սարյանի արվեստանոցի և բնակարանի նախագիծ»:

Կարո՞ դ էին արդյոք նրանք իրենց անդրանիկ հանդիպման ժամանակ ենթադրել, որ տարիներ անց երկուսն էլ կիանգրվանեն հայրենիքում հարազատ Երևանում, և Թամանյանի նախագծով կառուցված իր տանը, լուսավոր, ընդուղձակ, Սասիսմերին նայող հրաշք արվեստանոցում Սարյանը կհավերժացնի ընկերոջ կերպարը կտավի վրա՝ ստեղծելով դիմանկարային մի գլուխգործոց, որը պատվավոր տեղ կգրադարձնի Յայաստանի պետական պատկերասրահում:

ՄԱՐԻՆԱ ՍԱՅԱԿՅԱՆ

Նամականի

Дорогой Мартирос Сергеевич,

Письмо Ваше Арпеник Назарбекян мне передала своевременно. Пользуясь ее любезным согласием доставить это письмо, пишу Вам. – Я нахожусь в ужасном горе. У меня умерла старшая дочь 13 ½ лет. Потеря эта для меня так неожиданна и так тяжела, что я до сих пор не могу примириться с ней и не могу прийти в себя от ужасных страданий, которые неизмеримо тяжелее всякой болезни. Мое душевное состояние мешает мне написать Вам более обстоятельно и побеседовать должным образом об интересующих нас обоих вопросах. Ваши чувства и мысли в отношении долга «культурных сынов» Армении глубоко симпатичны и безусловно близки мне. Бессспорно, в созидательной работе в Армении должны принять деятельное участие все ее культурные сыны. Во имя этой же идеи еще в 1919 году я приехал в Армению и работал по мере своих сил, полтора года. Я надеюсь вскоре поработать для нее опять; у меня нет иного желания, как отдать остатки моих сил нашей национальной культуре, и чем скорее смогу возобновить мою работу, тем более буду счастлив. Приехать в Армению сейчас мне невозможно; я не могу оставить здесь семью (уже в четвертый раз) без средств к существованию и без близких людей. Рассчитывать на возможность пересылки им средств из Эревани нельзя, так как эта возможность непостоянна и ненадежна. Помимо материальной стороны есть много оснований не разлучаться пока с семьей; душевное состояние жены и детей тоже очень тяжелое. Необходимо прибавить, что семье моей, за последние годы, пришлось уже много выстрадать от троекратных, очень тяжелых переездов с места на место, вслед за мной¹. Сюда дети мои приехали слишком истощенными и только здесь (двою младших) начинают мало-помалу восстанавливать свои силы. Здесь как бы ни была скромна жизнь, всегда можно иметь в изобилии молочные продукты, сахар, яйца и прочее необходимое для детского организма. Лишить их этого я не в силах. Я много раз интересы моей семьи приносил в жертву служению долгну перед обществом и др.; подвергать вновь семью тяжелым испытаниям, осо-

бенно после такого потрясения не позволяет совесть². Обстоятельства иногда бывают сильнее воли человека, и я принужден отложить свой приезд в Армению, надеюсь, до весны. – Я очень интересуюсь той культурной работой, которая теперь осуществляется в Армении благодаря Вам, Ашхарбеку³ и другим культурным работникам. Вас давно недоставало в Армении. Я очень рад Вашему приезду и неоднократно высказывал мысль о Вашей незаменимости и необходимости Вашего приезда в Армению. Буду очень признателен, если будете мне писать о ходе работ в области культуры и искусства. Шлю Вам сердечный привет и желаю блестящих достижений во всех Ваших начинаниях на благо нашей нации. –

Преданный Вам
А. Таманян
Тавриз. 1922 г. Февраля 5 дня.
(Пишите через здешнее консульство)

P. S. Передайте мой привет Дачату Хачванкяну⁴, котор[ый], если не ошибаюсь, служит в Вашем ведении. Рекомендую его Вам с самой лучшей стороны. Он очень милый, скромный и талантливый человек.

Многоуважаемый Мартирос Сергеевич

Рекомендую Вам подателя этого письма Симавона Фарадяна, ученика моей студии⁵. Он поработал у меня шесть–семь месяцев и сделал крупный успех, несмотря на то, что материальные его условия не давали возможности ему работать регулярно и более спокойно. Окажите ему Ваше всесильное содействие в том, чтобы он мог заняться в Армении излюбленным делом и развить свои природные дарования. Шлю привет. С совершенным почтением А. Таманян

Тавриз, 5/V-1922 г.

P. S. Если к Вам обратится Вергинэ Татевосян, тоже моя ученица, то ее также рекомендую Вам как вполне способную ученицу. Оба они (она и Фарадян) начинали у меня с самых «азов» (раньше не работали) и за короткое время значительно подвинулись: недурно рисовали маску Аполлона.

А. Т.

14. VI. 1926 р.

Յերևան

Սիրելի Մարտիրոս,

Ստացել եմ երեք նամակդ ել. Ծառ շնորհակալ եմ, վոր ինձ չես մոռացել. Ներողություն, ժամանակին չպատասխանելուս համար, պատճառը հիվանդություն եր, վորից նոր եմ ապաքինվել. քո արտահայտած կարծիքը ներկա շինարարության մասին՝ համամիտ եմ և կաշխատեմ քո ցանկությունները իրականություն դարձնել. ժողովրդական Տան վերաբերյալ գործնական աշխատանքները արդեն սկսվել են և վաղը մյուս օր արդեն

կիայտարարենք մրցանակ, վորի ժամկետ նշանակված է օգոստոսի 25-ը⁶: Այդ Տան գործերը դեկավարելու համար յես աշխատում եմ հեռանալ ուրիշ պաշտոններից:⁷

Այս նանակը կարծ եմ գրում, վախենալով, վոր նա քեզ չհասնի Մոսկ-վայում, հետևյալ նամակով երկար կղուցենք:

Լուսիկ Լազարևնայի⁸ հետ շատ հաճախ պատահում ենք, իենց երեք ընտանիքով միասին եինք և միասին 2 ժամ անց կացրինք.

Երմակովի⁹ մասին գրած շատ կարևոր է, շատ շնորհակալ եմ, քո նամակը նրա հասցեով այս րոպեիս չկարողացա գտնել, խնդրում եմ նորից ուղարկել նրա հասցեն:

Յես արդեն կարուտել եմ քեզ, ափսոսում եմ, վոր այստեղ չես, քո բացակայությունը շատ ես զգացի: Այնուամենայնիվ շատ ուրախ եմ, վոր ճանապարհորդել ես, ցանկանում եմ լիակատար հաջողություն և առողջություն.

Համբուրում եմ՝
քո Ալեքսանդր

Իմ սիրելի Սարտիրոս,

Գիտեմ, վոր բարկացած ես ինձ վրա, իմ նամակ չգրելու պատճառով. բայց հույս ունեմ, վոր ներողամիտ կլինես դեպի ինձ:

Յես չեմ արդարանում, վղողվիետեվ մի նամակ գրելս դժվար գործ չե, բայց պետք է ասեմ, վոր ինքս ել չեմ նկատել ինչպես անցել է այս վերջի տարին: Առավոտվանից մինչեւ ուշ գիշերը, կարծ ընդմիջումով ճաշի համար, յես աշխատել եմ մի քանի լուրջ նախագծերի վրա, վորոնց մեջ առաջի տեղն եր բռնում անշուշտ ժողովրդական Տունը: Բացի այդ քեզ հայտնի են անվերջ յեվ բազմաթիվ ժողովները, վորոնք միանգամայն զրկում են ազատ շունչ քաշելու յեվ մտածելու կարողությունից: Այդ աշխատանքները ինձ այնքան եյին հոգնեցնում, վոր ամբողջ տարվա ընթացքում վոչ մի նամակ չեմ գրել թե քեզ թե Շչույեվին¹⁰ յեվ թե ուրիշներին:

Գիտեմ յեվ ուրախ եմ, վոր դու շատ հետաքրքրվում ես ժողովրդական Տան նախագծով յեվ կուգեյի շատ բան ասել քեզ այդ մասին, բայց առայժմ անկարող եմ, վորոհետեվ շտապում եմ գնալ ելի գործով: Վոր գաս Յերեվան շատ կիսունք այդ մասին: Առայժմ կարող եմ հայտնել, վոր թատրոնի նախագիծը վերջացրած եր յուլիսի սկզբին յերեք վարիանտով, վորոնցից առավելություն ունեցավ առաջինը:

Ուղարկված կարծ բացատրագրից վորոշ չափով կծանոթանաս նախագծի գաղափարի հետ:

Նոյեմբերի 6-ին Յոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առթիվ յենթադրվում է կատարել ժողովրդական Տան հանդիսավոր հիմնադրությունը¹¹: Կարծում եմ, վոր կարելի կլինի Յերեվան թերթում տպել թատրոնի նախագիծը յեվ բացատրագիրը: Դեռ վերջնականապես վորոշված չե հանդիսավոր հիմնադրության որվա հարցը: Մոտ որերս կպարզվի յեվ ես կիայտնեմ քեզ: Յեթե նույնիսկ հիմնադրությունը չկատարվի, այ-

Առաջնային կարելի է թերթում տպել, յեթև ցանկանաս. Մանավանդ թե ռուսական յեվ, թե հտալական թերթերը տպում են:

Միաժամանակ ուղարկում եմ Ս. Շահումյանի արձանի նրգման ծրագիրը յերեք որինակ, վորը կարող ես տրամադրել Փարիզի հայ գեղարվեստագետներին:

Համբուրում եմ քեզ, վորոհետեվ շատ եմ կարոտել: Քեզ սիրող Ա. Թամանյան

8 հոկտեմբերի 1927 թ.

ՅԵՐԵՎԱՆ

Խորին բարեվներ տպագրողից

(վիրքության ժամանակ)



14. VI. 1926 p.

3. *Stephan*

What's happening.

Although the staff consider it: very
desirable to go to the strength,
strengths, disturbance, disturbance
and leadership, among which Stephen -
Jones has, probably, the most influence
on the members of his party, and
Stephen Jones' influence
on the development of your
- probably more than any other.
I hope you will be able to
see him in your next meeting.

which let a young sprout up near
the flings and stirs the ground,
just as though it were new; +
again about 25-6: May tree
days. Mysore has come to the
middle of its flowering with
no blossoming:

Mr. Loring's first H. does not
influence us, for we are the channel
through which the young ones
are passing:

first flowers of the year have
arrived. They will continue
for two months + then
it will be over.

Задача № 1. Дана система уравнений
и требуется решить ее.

Zentrale W

for Giffen

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ 1919 թ. հունվարին Թամանյանը մեկնեց Պետրոգրադից Անապա, ուր գտնվում էր նրա ընտանիքը: Դեռ 1917 թ. կնոջը և երեք երեխաներին նա ուղարկել էր հարավ՝ անվտանգության նկատառումներով: 1919 թ. հոկտեմբերին Թամանյանը եկավ Հայաստան: 1921 թ. ապրիլին Հայաստանից մեկնեց Պարսկաստան (Թավլիզ):

² Մեկ անգամ չեմ, որ ընտանիքի շահերը նա զոհաբերել է հանուն քաղաքացիական պարտքի: Այդպես էր 1917 թ. հեղափոխության ժամանակ, երբ ընտանիքը ուղարկեց հարավ՝ Անապա, իսկ ինքը մնաց փորորկալի Պետրոգրադում՝ ջանալով կազմակերպել նախսին Կայսերական գեղարվեստի ակադեմիայի աշխատանքները, որի փոխնախագահ էր նշանակվել Ժամանակավոր կառավարության կոմիսարի հրամանով: Թամանյանը դարձավ նաև նախաձեռնողն ու կազմակերպիչը Ռուսաստանի արվեստագետների ամենախոշոր միավորնան՝ «Արվեստի գործիչների միության», որի նախագահ էր ընտրվել 1917 թ. մարտին: Ղեկավարելով Կայսերական գեղարվեստի ակադեմիան և «Արվեստի գործիչների միությունը»՝ նա ամբողջ ուժերը ներդնում է բոլշևիկների վայրագություններից արվեստի գործերը և ճարտարապետական կառույցները փրկելու հանար, կազմակերպում է պալատական արժեքների հսկողությունը, գործնական քայլեր է ծերնարկում՝ թույլ չտալով, որ երկրի ազգային արժեքները թալանվեն և փոշիացվեն, արգելում է արվեստի գործերի վաճառքը նաև ավագոր անձանց և դրանց արտահանումը երկրից: Պահպանված բազմաթիվ փաստաթղթերը վկայում են Թամանյանի անձնվեր աշխատանքի և հերոսական ծիգերի մասին: Ֆիշտ այդպիսի նվիրումնով նա աշխատում է նաև Առաջին Յանրապետության օրոք և նրա անկումից հետո՝ մի քանի ամիս Խորհրդային Հայաստանի ժամանակ՝ զբաղեցնելով մի շարք պատասխանառու պաշտոններ:

³ Քալանթար Աշխարեկ Ա. (1884-1942) – հայագետ, հնագետ, պատմաբան: Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի մշտական անդամ և գիտական քարտուղար:

⁴ Խաչվանքյան Տաճատ Յ. (1896-1940) – խորհրդահայ նկարիչ: Ստեղծագործել է գիտական գործի գեղարվեստական ծնավորման ու նկարազարդման ասպարեզում:

⁵ 1921 թ. հովհանի 18-ին Ա. Թամանյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ բացվում է գեղարվեստական ստուդիա, որը գործում է մինչև 1922 թ. մարտը: Պարապում է ին նկարչություն, համաշխարհային և հայ արվեստի պատմություն: Ստուդիայում Թամանյանին գործակցում էր Յակոբ Կոջոյանը: Ստուդիան տվել է 51 շրջանավարտ:

⁶ Թամանյանը գտնում էր, որ ժողովան նման կարևոր հասարակական կառույց նախագծելու առաջ անհրաժեշտ է անցկացնել մրցույթ: Այն պետք է պարզեր ճարտարապետական նոտեցումները շենքի տեսքի, ոճի, քաղաքաշինական դերի, չափերի, կազմի, ֆունկցիոնալ կազմակերպման և այլ հարցերի նկատմամբ: 1926 թ. մայիսին հայտարարվել է մրցույթ, որին ներկայացվել էր 8 նախագիծ: Արդյունքները անփոփոխ են 1926 թ. հոկտեմբերին և վերջին հաշվով եղել են անբավարար, հատկապես ամենագիշակու խնդրում՝ ստեղծել մայրաքաղաքի համար դոմինանտ հանդիսացող մոնումենտալ հասարակական շենք, ավելին՝ ազգային մշակույթի վերածննան խորհրդանից: Այդ խնդիրը լուծեց Թամանյանը:

⁷ Այդ տարիներին Թամանյանը զբաղեցնում էր ՀԽՍՀ ժողկոմիսորիին կից բարձրագույն տեխնիկական խորհրդի ղեկավարի, Հնությունների պահպանության կոմիտեի նախագահի, Հայաստանի կերպարվեստի աշխատողների ընկերության նախագահի, ՀԽՍՀ պետական նախագահի տեղակալի պաշտոնները: 1926 թ. հունիսին Թամանյանին ազատում են բոլոր պարտականություններից՝ թողնելով նրան միայն Պետպանի նախագահության անդամ:

⁸ Լուսիկ Լազարևնա – Լուսիկ Աղայան՝ Սարյանի կինը, Ղազարոս Աղայանի դուստրը:

⁹ Երմակով Դմիտրի Ի. (1845-1916) – ռուս անվանի լուսանկարիչ, մասնագիտությամբ ռազմական տեղանքագիր, ռազմական բազմաթիվ արշավանքների, ինչպես նաև ազգագրական և հնագիտական արշավների նամակից: Թողել է ավելի քան 30 հազար նեգատիվներ: Լույս է ընծայել 127 ֆոտոպլան:

¹⁰ Շչուս Ալեքսեյ Վ. (1873-1949) – ճարտարապետ և քաղաքաշինարար, ճարտարապետության ակադեմիկոս, Ս. Պետերբուրգի Կայսերական գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ վաստակավոր ճարտարապետ: Թամանյանի մտերիմ ընկերն էր:

¹¹ Ժողովան նախագիծը ընդունվեց 1927 թ. հուլիսի 6-ին: Շինարարությունը սկսվեց 1930 թ. հուլիսի 15-ին, իսկ հիմնադրման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ նոյեմբերի 28-ին և նվիրված էր Յայաստանում խորհրդային կարգերի հաստատման 10-ամյակին:

МАРИНА СААКЯН – Письма Александра Таманяна Мартиросу Сарьяну. – Архитектор А. Таманян и художник М. Сарьян – выдающиеся деятели армянской культуры. Велик и неоценим их вклад в дело возрождения Армении. Свои знания и опыт, талант и мастерство они без остатка отдали родине и народу. Таманян стал основоположником новой армянской архитектуры, а Сарьян – живописи. Кроме того, они самым активным образом участвовали в создании культурной среды, во многом определив тот высокий уровень, который стал мерилом эстетического вкуса для последующих поколений. Первые два письма написаны в 1921 году по-русски из персидского города Тебриза (Тавриза), где тогда жил Таманян с семьей, в Ереван, а два других – в 1926 и 1927 годах по-армянски из Еревана в Париж.

MARINA SAHAKYAN – Alexander Tamanyan's letters to Martiros Saryan. – Tamanyan and Saryan, two outstanding personalities of the Armenian culture, had an invaluable contribution to the rebirth of Armenia. They invested their experience, knowledge, talent, and skills in both their country and nation. While Tamanyan became the founder of the new Armenian architecture, Saryan created the contemporary painting school. At the same time, both artists contributed to forming a cultural environment, distinguished by artistic heights treasured by later generations.